կուած կլինենք կեանքի ապահովութիւնից, երբ մենք չենք կտրող Բարձրագոյնս մեզ շնորհուած բարիքները վայելել։ Առաջ ու առաջ պէտք է մտածել ապահով ապրելու վերայ և ապահովապրելու վրայ։

Մենք կարծում ենք, որ բացի մեր անհրաժեշտ ինքնապաշտպանութեան միջոցներից, խիստ կարևոր է, որ հայ ժողովուրդը միաբերան խնդրէ պետութիւնից, նախ պաշտօնապէս թոյլ տալ իրան ազատ կերպով ինքնապաշտպանութեան միջոցների դիմել և ապա զինուորական դատարան հիմնել յանցաւորներին պատժելու համար։ Շատ կոտորեցինք և շատ կոտորուեցինք, բայց ո՞ր յանցաւորը՛ մէկ թէ միւս կողմից ստացաւ իւր արժանաւոր պատիժը։ Մուժանին զսպողը՝ ամենախիստ պատիժն է և երբ նա տեսնում է որ կարող է անպատիժ կերպով և սպանել և թալանել և այդ աւարով առանց քրտինք թափելու ապրել՝ այնուհետև նորա միջից բանական մարդը դուրս է գալիս և մտնում անդգայ և արիւնարբու գազանը։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Օգոստոսի 6-ը նշանաւոր յեղափոխութիւն մտցրեց Ռուսիայի կեանքի մէջ. այդ օրը հրատարակուեց բարձրագոյն հրովարտակ, որով կայսրութեան ամբողջ բնակչութիւնը հրաւիրուում է ընտրուած մարդկանցով կազմել Պետական Դուման — ժողովրդական մի ներկայացուցչութիւն, որ պէտք է մասնակցէ երկրի համար օրէնք կազմելուն։ Այդպիսով այսուհետև ինքը ժողովուրդը յայտնի չափով պէտք է մասնակցէ երկրի կառավարութեան գործին, ընտրելով դորա համար իր միջից արժանաւոր ներկայացուցիչներ։

Ռուսիայի ժողովուրդը վաղուց ձգտում էր միջամտել երկրի կառավարութեան գործին, բայց միշտ էլ յետ էր մղուում ռուս բիւրօկրատիայից, բայց այժմ նորա իրաւունքները ճանաչուած և գործադրութեան են մտած Կայսերական գահոյքից տուած վերոյիշեալ հրովարտակով, որի հայ թարգմանութիւնը բերում ենք այստեղ։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Ողորմութեամբ Աստուծոյ Մենք Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ համայն Ռուսիոյ, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլեանդիայի և այլն և այլն և այլն։

Ցայտարարում ենք մեր բոլոր հաւատարիմ հպատակնե-
րին։

Ռուսաց պետութիւնը ստեղծուել է Ցարի ու ժողովրդի
և ժողովրդի ու Ցարի անքակտելի ամուր միութեամբ, Ցարի
և ժողովրդի համաձայնութիւնն ու միութիւնը բարոյական այն
մեծ զօրութիւնն է, որից ստեղծուել է Ռուսիան դարերի ըն-
թացքում, պաշտպանել է նրան ամեն տեսակ աղէտներից ու
պատահարներից և Ցարը հանդիսանում է իբրև գրաւական
նրա միութեան, անկախութեան և ամբողջութեան, նիւթական
բարօրութեան և հոգեկան զարգացման ներկայում և ապա-
գայում։

1903 թուի փետրուարի 26-ին տրուած հրովարտակով
հայրենիքի բոլոր հաւատարիմ զաւակներին կոչում էինք սեր-
տօրէն միանալ կատարելագործելու համար պետական կարգը,
ամուր կազմ սահմանելով տեղական կեանքի մէջ, և այն ժա-
մանակ մեր մտահոգութիւնն այն էր, որ ընտրողական հասա-
բակական հաստատութիւնները համաձայնեցնենք կառավարչա-
կան իշխանութիւնների հետ և արմատախիլ անենք նրանց
միջև եղած պառակտումը, որն այնքան կործանարար ազդե-
ցութիւն ունի պետական կանոնաւոր ընթացքի վրայ։ Այս մա-
սին չեն դադարել մտածել Ինքնակալ Ցարերը, Մեր Նախորդ-
ները։

Այժմ հասել է ժամանակը, հետևելով Նրանց բարի ձեռ-
նարկութիւններին, ընտրովի մարմին կանչելու ամբողջ Ռուս-
սական Երկրից, որ մշանջենապէս և գործնականապէս մասնակ-
ցեն օրէնքների կազմութեան, այս բանի համար մտցնելով պե-
տական բարձր հաստատութիւնների կազմի մէջ մի առանձին
օրինախորհրդակցական հաստատութիւն, որին իրաւունք է
տրւում մշակելու և քննադատելու օրինագծերը և քննելու պե-
տական եկամտացոյցերը։

Այս նկատումներով, անխախտ պահպանելով Ռուսական
կայսրութեան հիմնական օրէնքը Ինքնակալ իշխանութեան
էութեան մասին, մենք բարւոք համարեցինք հիմնել պետական
դումա և կանոնադրութիւն հաստատեցինք դումայի ընտրու-
թիւններին վերաբերեալ, տարածելով սոյն օրէնքների զօրու-
թիւնը ամբողջ կայսրութեան վրայ, այն փոփոխութիւններով
միայն, որոնք հարկաւոր կը դառնան առանձին պայմանների
մէջ գտնուող նրա մի քանի ծայրերի համար։

Ֆինլեանդիայի Մեծ Իշխանութեան ընտրեալների պետա-
կան դումայում ունենալիք մասնակցութեան կարգի մասին,

կայսրութեան համար ընդհանուր և դոյն երկրի օրէնսդրութեանց խնդիրների վերաբերմամբ, Մենք ցուցումներ կը տանք առանձին։

Ընդ սմին Մենք հրամայեցինք ներքին գործերի մինիստրին անյապաղ կանոններ ներկայացնել Մեզ ի հաստատութիւն պետական դումայի ընտրութիւնների կանոնադրութիւնը գործադրելու մասին այնպէս, որ 50 նահանգներից և Դոնի Զօրքի շրջանից ընտրուած անդամները կարող լինին դումա դալ 1906 թուի յունուարի կէսից ոչ ուշ։

Մենք Մեզ ենք վերապահում ամբողջովին պետական դումայի հաստատութեան յետագայ կատարելագործութեան հոգացողութիւնը, և երբ կեանքն ինքը ցոյց կը տայ նրա հաստատութեան մէջ այն փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը, որոնք կարող են կատարելապէս գոհացում տալ ժամանակի պահանջներին և պետական բարօրութեան, չենք յապաղիլ այս մասին պատշաճաւոր ցուցումները տալ իւր ժամանակին։

Վստահութիւն ենք տածում, որ ամբողջ բնակչութեան վստահութեամբ ընտրուած մարդիկ, որոնք այժմ կանչւում են մասնակցելու կառավարութեան հետ միասին օրէնսդրական աշխատանքին, ցոյց կը տան ամբողջ Ռուսիայի առաջ, որ իրենք արժանի են Ցարի այն վստահութեան, որով նրանք կանչւում են սոյն մեծ գործին մասնակցելու, և կատարելապէս համերաշխ միւս հաստատութիւնների և Մեզնից նշանակուած իշխանութիւնների հետ, օգտակար աջակցութիւն ցոյց կը տան Մեզ ի բարօրութիւն մեր ընդհանուր Մայր-Ռուսիային հաստատելու պետութեան միութիւնը, ապահովութիւնն ու վեհութիւնը և ժողովրդական կարգն ու բարօրութիւնը։

Աստուծոյ օգնութիւնը հայցելով Մեր ձեռքով հիմնուող պետական հաստատութեան աշխատանքների վրայ Մենք, անսասան հաւատով առ ողորմածութիւն Աստուծոյ և առ պատմական այն անշեղ վիճակը, որ որոշել է Աստուածային Նախախնամութիւնը Մեր թանկագին Հայրենիքի համար, հաստատապէս ապաւինում ենք՝ որ Ամենակարող Աստուծոյ օգնութեամբ և իւր բոլոր դաւակների միահամուռ ջանքերով Ռուսիան դուրս կը գայ յաղթական ներկայումս իրեն հասած ծանր փորձանքներից և կը վերածնի իւր հազարամեայ պատմութեամբ դրօշմուած հզօրութեան, վեհութեան և փառքի մէջ։

Տրուած է Պետերհոֆում օգոստոսի վեցերորդ օրը, Քրիստոսի Ծննդեան հազար ինն հարիւր հինգերորդ, իսկ Մեր թագաւորութեան տասնամեկերորդ տարում։

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան սեպհական ձեռքով ստորագրուած է ՆԻԿՈԼԱՑ

Այսպիսով Ռուսիայի բազմացեղ ազգութիւնների վերայ սուրբ պարտականութիւն է դրուած, արժանաւոր մարդիկ ընտրելով, արդարացնելու Կայսերական Գահից արտայայտուած վստահութիւնը իրենց վերայ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

▬ Մեր աշխատակից պ. Գարեգին Ենգիբարեանցը խնդրել էր պատշաճաւոր իշխանութիւնից թոյլ տալ իրան հրատարակել Բագու քաղաքում հայերէն լեզուով մի ամենօրեայ թերթ «Երկիր» անունով։ Հաւաստի աղբիւրից մենք իմացանք, որ թոյլ է տրուած արդէն այդ թերթի հրատարակութիւնը։

▬ Քաղաքիս հայ բանտարկեալները խնդրել են մեզ յորդոր կարդալ հայ խմբագրութիւններին և հրատարակիչներին՝ ուղարկել իրանց լրագիրներ և գրքեր՝ միայնութեան ժամանակ օգտակար գործով զբաղուելու համար։ Բարի ցանկութիւն էր և մենք կարգադրեցինք արդէն ուղարկել նոցա «Լուսաւոր», յուսալով, որ ուրիշներն էլ կյարգեն մեր դժբաղդ հայրենակիցների հրաւէրը։

▬ Անցեալները ռուս լրագիրներում կարդացինք նահանգապետի մի գեղեցիկ կարգադրութիւն, որ այսուհետև աշխատեն դիւանական աւելորդ գրագրութիւնները կրճատել և առհասարակ խոյս տալ «պատիւ ունիմ խոնարհաբար յայտնել կամ խնդրել» և այլ հնացած ձևերից և բաւականանալ հասարակ ձևերով և դիմումներով։ Արդարև ժամանակն է, որ մեր մէջ էլ վերջ տրուին այդպիսի աւելորդ ձևականութիւնները, որոնցով խճողուած է առհասարակ հայ դիւանատունների գրագրութիւնները. և ցանկալի է, որ ամենապարզ և դիւրին ձևեր սահմանուին յարաբերութիւնների համար. մանաւանդ անհրաժեշտ է բոլորովին վերացնել ծննդականների վերաբերեալ երկար ու բարակ «դակլառները», «ժուռնալները» են և այնպէս կարգադրել, որ 1—2 օրում ժողովուրդը հնար ունենայ ծննդական ստանալ, փոխանակ այժմեան 10—20 օրերի։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I.

«Լուսայիդ» էջերում քանիցս երևեցաւ նկատողութիւն, որ մինչև այժմ «Մշակի» խմբագրութիւնը հրապարակական